

կուցն $\simeq \simeq$: Այստեղից երևում է նաև, որ երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ ր-ն փոխարինւում է յ-ով. բա՛րի > բայի > բայ-: Ինչպէս տեսնում էք՝ յ-ն այստեղ նախնական հնչիւնն է: Նա արտաբերական հոլովոյթի արդիւնք է: Եթէ արտասանութիւնը հաւատարիմ մնար բառերի նախաւոր կերպարանքին եւ «բարի» բառը բարի հնչուէր, մենք չէինք ունենայ յ ձայն «բայրիզուն» ձեւի մէջ: Նա չի ծագում ո՛չ նախաւոր ր-ից, ո՛չ հետեւորդ ի-երկից. նա պարզապէս բռնում է չիրացած ր-ի տեղը, այսինքն գոցում է յօրանչքը:

*Մրջի՛ւ(ա)ն, *սի՛պ(ի)տակ, *հրամա՛ւնի-ալ, *բանի՛րի, *կամա՛րի եւ այլն նախաւոր ձեւերի մէջ մենք տեսնում ենք, որ բաղաձայնները դալիս են միշտ շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ եւ ա՛յդ կացութեան մէջ է, որ փոխարինւում են յ կամ լ ձայններով: Հին հայերէնի գորաւոր շեշտի ազդեցութեան տակ հարեւան բաղաձայնը դա՛հափոխում է, չի կարողանում իրանալ իբր ԼԻԷ եւ նշմարելի բաղաձայն, ուստի ձայնաւորներն իրար մօտենում են բաղաձայնի զիսկի վրայով եւ ստացւում է մի տեսակ յօրանչք. մրջիան, սիիտակ, հրամաի-ալ, բանիի, կամաի եւ այլն. ահաւասիկ այս յօրանչքն է, որ լցնում են յ եւ լ ձայնները, որոնք այդ իսկ պատճառով լծորդ են իրար: Դրանք խաչքարեր են օրավակաս բաղաձայնների վրայ, որ լիովին իրանալ չկարողացան:

Այս փոխարինման պայմանները բոլոր դէպքերի համար որոշ չեն: Կարող ենք բանաձեւել մի «օրէնք» միայն, որ վերաբերում է -թիւն, -թեան փոխանցումին: Ահաւասիկ սիկ այդ օրէնքը. «-իւն վերջացող բառերի մէջ նախաւոր բաղաձայնը երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ փոխարինւում է լ-ով, իսկ շեշտից առաջ միեւնոյն բաղաձայնը փոխարինւում է յ-ով»: Հմմ. մրջի՛ւ-ձայնը փոխարինւում է յ-ով: ման > մրջի՛ւան > մրջի՛ւն (շեշտից յետոյ). մրջի՛ւման > մրջի՛ւան > մրջեան (շեշտից առաջ). այդպէս նաև արիւն - արի՛յան > արեան, բարութիւն - բարութի՛յան > բարութեան եւ այլն:

Հետաքրքրական է պաշտօն բառի թեթումը, որ այս փոխանցման միջանկեալ մի փուլն է: Գրելով այդ բառը դասական կարգով, մենք կը ստանանք պաշտա՛ւն շեշտն ա-ի վրայ): Մեր տեսութեամբ ըն խմբի մէջ չբա-

ցած է մի վաղեմի ձայնաւոր: Սեռական ձեւը ցոյց է տալիս, որ այդ ձայնաւորը ա է: Վերականգնելով կորած ձայնաւորը եւ զուգադրելով այդ բառի ուղղակ. եւ սեռակ. ձեւերը, մենք կը ստանանք՝

Ուղ. *պաշտա՛ւան > պաշտա՛ւն > պաշտօ՛ն. Սեռ. պաշտամա՛ն:

Այստեղից պարզ երևում է, որ պաշտա՛ւն բառի մէջ լ-ով փոխարինուողը մ բաղաձայնն է, որ իր բուն արժէքով երևում է սեռակ. ձեւի մէջ: Այդ լ-ը գտնւում է երկու ձայնաւորի միջեւ եւ դալիս է շեշտից յետոյ, ուստի վերը բանաձեւածս օրէնքի հիման վրայ լ-ը փոխարինուած է յ-ով: Սեռական ձեւը սակայն նոյն օրէնքի հիման վրայ, պէտք է լինէր *պաշտապա՛ւն, բայց մենք ունինք պաշտամա՛ն: Նոյն լ-ը երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից առաջ յ չի դարձած, որ սպասելի էր: Այս երեւոյթը կարելի է երկու կերպ մեկնել. ա. պաշտա՛ւն բառը մի թերատ հոլովոյթ է մեզ տալիս, ուր Ուղղական ձեւն արդէն փոխած է լ-ը եւ տուած է լ. իսկ սեռական ձեւը դեռ եւս փոխած չէ լ-ը եւ այդպէս կիսաճամբին քարացել է: Բ. Աւելի հաւանական էմ համարում երկրորդ մեկնուածութիւնը. պաշտամա՛ն սեռականը *պաշտամն ուղղականինն է, որ չէ աւանդուած (հմմտ. սե՛րմն - սերմա՛ն. որին զուգահեռ կը կարգւէր. *պաշտա՛մն - պաշտամա՛ն). իսկ պաշտա՛ւն (պաշտօն) ձեւը *պաշտապա՛ն սեռականի ուղղական ձեւն է, որ չի աւանդուած: Այս վիճակի մասին դադարիար կազմելու համար երեւակայէք, որ մենք ունինք իբր ուղղական մրջիւն, իսկ իբր սեռական՝ մրջիւան > մրջեան > մրջիւն ուղղականը՝ մրջիւան > մրջեան > մրջիւն ուղղականը - մրջիւն: Ես զուգադրում եմ երկու հոլովական կարգերը, ընդգծելով աւանդուած ձեւերը միայն:

Ուղղ. *պաշտա՛մն, պաշտա՛ւն. Սեռ. պաշտամա՛ն, պաշտապա՛ն:

Երկու տարբեր հոլովական կարգեր, որ դալիս են տարբեր լեզուական միջավայրերից, միացած են գրաբարի հասարակաց գանձարանի մէջ, մէկը բերած է իր ուղղականը, միւսն՝ իր սեռականը եւ այդ երկուսը դարձած են միեւնոյն բառի երկու տարբեր

հոլովները, ստեղծելով մի քերականական «բացառութիւն» կամ «զարտուղի հոլովում»: Մեր վերականգնած հոլովական զուգահեռ կարգերից դուք տեսնում էք, որ հոլովների կազմութեան մէջ զարտուղութիւն չկայ. այդ երկու ձեւերի ճակատագիրն է զարտուղի, որ կորցնելով իրենց առաջին ամուսինները, սպրիացած են եւ գրաբարի հոլովանու տակ երկու այբերկերը կնքած են նոր ամուսնութիւն, մէկը միւսին լրացնելով:

Նոյնքան հետաքրքրական է անուցն - անուա՛ն հոլովական կարգը: Գիտենք, որ սեռական եւ ուղղական նոյն ձեւերն են՝ տարբեր շեշտառութեամբ: Միեւնոյն ձեւից, որ է անուան (ow) ծագում են եւ ուղղականը եւ սեռականը. շեշտուելով իբր անու՛ան, այս ձեւի վերջին ա-ը սղած շեշտից յետոյ դալիս սեռական ձեւի մէջ շեշտն անցնելով վերջին ա-ին, նա մնացած է իր տեղը, որով հմմ. պարսկ. پادشاه, յուն. δνομα: Մեր վերը բերած օրէնքին նայելով, պէտք է, որ լ-ը բերած օրէնքին նայելով, պէտք է, որ լ-ը սեռական ձեւի մէջ, այսինքն երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից առաջ դառնար յ եւ բառը հնչէր իբր անոյ՛ան. հմմ. մրջի՛յան. բայց այս տեսակ մի ձեւ մեզ աւանդուած չէ: Պէտք է կարծել, որ հին հայի գիտակցութիւնը գոհացած է այն հակադրութեամբ, որ կայ ամփոփ անուցն եւ անվթար անուան ձեւերի միջեւ եւ այդքանը բաւ է համարած իր ուղղականի եւ սեռականի դադարները զատորոշելու համար:

Եթէ հիմա համեմատենք. պաշտա՛ւան - *պաշտապա՛ն հոլովական կարգը մի կողմից - հայր - հայր (հօր), միւս կողմից մրջիւն - մրջիւան > մրջեան հոլովական կարգերի հետ, մենք կը տեսնենք, որ պաշտա՛ւն բառի թեթումը զուգահեռ է -ի՛ւն, իյա՛ն թեթման. նա եւ ուղղականի մէջ ունի լ, իսկ սեռականի մէջ յ պիտի ունենար, եթէ օրինական պաշտապա՛ն ձեւը աւանդուած լինէր¹: Ահաւասիկ զուգադրութիւնը.

Ուղղ. հա՛յր, *պաշտա՛ւան > պաշտա՛ւն. Սեռ. հա՛ւր, *պաշտապա՛ն:

¹ Կարծում եմ այդ ձեւի մի հետքն է պաշտե՛ բաղաձայնը, որ գտնուում էք մոզպաշտե՛ բառի մէջ. նա լուծելի է իբր - պաշտապ, որ մեր պաշտապ-ան ձեւն է առանց ան ամանցի:

Մենք տեսնում ենք, որ հայր բառի «օրինական» սեռականը (հայր) դարձած է ուղղական եւ ընդհակառակն՝ «օրինական» ուղղականը (հայր) դարձած է սեռական: Եթէ այդ բառը -ի՛ւն - իյա՛ն > եա՛ն կարգով թեթումէր, իր ուղղականը պէտք է լինէր հա՛ւր (ինչպէս -ի՛ւն, որ լ ունի). իսկ սեռականը (ինչպէս -ի՛ւն, որ լ ունի) ինչպէս -իյա՛ն, որ պէտք է լինէր հա՛յր (ինչպէս -իյա՛ն, որ յ ունի): Սա ցոյց է տալիս, որ հայր եւ հայր ձեւերը երկուսն էւ վաղեմի ուղղականներ են. մէկը դալիս է մի լեզուական միջավայրից, ուր ընկած ձայնաւորը փոխարինւում էր յ-ով, իսկ միւսը մի ուրիշ լեզուական միջավայրից, ուր նոյն բաղաձայնը նոյն պայմաններէ, որ փոխարինւում էր լ-ով: Այս է պատճառը փոխարինում էր լ-ով: Այս է պատճառը, որ հէրանք եւ հօրանք կազմութիւն-ճառը, որ հէրանք եւ հօրանք ունին: Մենք ունենք լիովին նոյն իմաստն ունին: Մենք ունենք դասական «հարանք» սեռականը, որ եւնինք դասական «հարանք» սեռականը, որ եւնինք դասական «հարանք» սեռականը: Այս թարգման է մի *հարանք ուղղական: Այս ձեւը կարելի է տրոհել իբր *հար-անք, ուր հար, որ զուգահեռն է հայր եւ հէր ձեւերի, ուղղական է: Յարգանք, որ է յարգ-անք, ուր յարգ ուղղական է: Պարզ է, որ այս կարգի կազմութեանց տարապն է՝ բառի եզ. ուղղական ձեւը + անք: Տրոհելով զուգադրում եմ մեր երկու ձեւերը.

հաւր-անք > հօր-անք
հայր-անք > հէր-անք:

Պարզ է, որ հայր եւ հայր ձեւերը զիտուած են իբր ուղղական: Նկատելով մեր վերը բանաձեւած երեւոյթը բաղաձայնների լ եւ յ ձայններով փոխարինուելու մասին ոչ մէկ հիմք կայ զարմանալու, որ հայր եւ հայր զիտուած են իբր ուղղական ձեւեր: Տեսանք, որ միեւնոյն յօրանչքը կարող է լցնել եւ յ-ն եւ լ-ը, այդ իսկ պատճառով մենք ունինք երկու տարատեսակ ձեւի ուղղական. հայր եւ հայր: Երկուսն էւ նոյն նախաւոր ձեւից են ծագում, որ է patēr: Ահաւասիկ այդ ձեւերի օրինական կազմութեան ընթացքը: Մեր լեզուի համար նախաձեւ առնելով հա՛տար (հմմ. գոթ. fadar, պարսկ. فدای) եւ նկատելով, որ այդ ձեւերի մէջ ա-ը դալիս է շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ, մենք զձում ենք հոլովոյթի ծիրը.

հա՛տար { հա՛յար > հա՛յր. տ-ի փոխարէն յ:
 { հա՛ւար > հա՛ւր. տ-ի փոխարէն լ:

Վաղեմի հա՛տար ձեւի երկու օրինաւոր յօրանչքները - հայր եւ հայր տարբեր լե-

զուական միջավայրերից գալով ու մտնելով հին հայերէնի հասարակաց դանձարանը, օգտագործուած են նախադրական հայի լեզուական տնտեսութեան մէջ երկու տարբեր դասակարգներ ներկայումս համար, միայն թէ փոխանակ և ունեցող (հալր) ձեւն ուղղականի համար կերպերու (համ. պաշտաւն), նա կերպարկած է յ ունեցող ձեւը (հայր) եւ ընդհանրապէս հալր ձեւը կիրարկած է սեռականի համար: Այս օրինակի վրայ մի անգամ եւս պայծառօրէն երեւում է, որ ո՛չ թէ տ-ն է «դառնում» յ կամ ւ, այլ տ-ին փոխարինում են յ-ն եւ ւ-ը: Այստեղ մինչեւ իսկ շեշտի փոփոխութիւն չկայ. հա՛տար (pater) ձեւի տ-ը միշտ նոյն պայմանների մէջ է. նա դրոշմուած է երկու ձայնաւորի միջեւ եւ գալիս է շեշտից յետոյ: Բայց ինչպէս տեսնում էք՝ միեւնոյն տ-ն է, որ միեւնոյն պայմաններէ մէջ տուած է կա՛մ յ, կա՛մ ւ: Պարզ է, որ մենք գործ ունինք երկու տարբեր լեզուական միջավայրերի հետ, որ ընկած բաղաձայններն փոխարինում են թէ՛ եւ լծորդ, բայց տարբեր ձայներով, որ են՝ յ եւ ւ²:

Ն. ԱՂԱՆԵՆ



ՅՓԵՍՈՍԻ ԵՐՐՈՐԴ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

(1500 ԱՄԵՆՅ ՏՆԵԳՎՈՐԶԻ ԱՌԹԻՒ)

Եփեսոս, Յոնիական հինաւուրց այս ոստանը, ուր դարեր շարունակ հեղին սերունդներ գրոհ կու տային Մեծին Արտեմիսի ուխտադիր, ուր ազոստեան դարու կենցաղատէր հոռոմայեցիք հեշտ անուրջներու դրախտալայրն կը փնտռէին, ուր երբեմն Տարսոնեան փողն ամենեցուն նորոգումն ի Քրիստոս կը տարփողէր, 15 դար յառաջ ա՛յսօր յաղթական Եկեղեցւոյ հովուապետներու հիւրամեծարը կ'ըլլար:

431 Յունիսին ժամագրալայրն եղած էր այն՝ քրիստոնեայ աշխարհի հովուապետներուն. ո՛չ մեծին Արտեմիսի ընծայարբեր, այլ Աստուածածին Կուսին պատուադիր ըլլալու:

Կոստանդինուպոլիս, Աղեքսանդրիա, Երուսաղէմ, Հռոմ² եւ Անտիօք համար

² Հ.մ. նաեւ հայրական, մայրական եւ հօրական, մօրական նոյնաբո՛ղք եւ նոյնիմաստ կազմութիւնները:

խմբուած էին այն տեղ: Չանապան էին խորհուրդները, պէսպէս ակնկալութիւնները:

Ի՞նչ էր օրուան հրատապ հարցը, ի՞նչ այս շարժման դրդապատճառը:

Համաշխարհական էր յուզմունքը. կայսերատուր՝ հրամանը. կայսերանիստ մայրաքաղաքին հովուապետին դէմ, վարդապետական փափուկ հարցի մը շուրջը:

Ճարտասանն իւր հրեղէն խօսքերուն ապաստան իբրեւ աստուածարան իջած էր հրապարակ. հաւատքն ամբաստնելու յաւակնութեամբ ձեռք տուած հիմքին՝ ամբողջ կերտուածքը քայքայման վտանգի էր մատնած:

Նեստոր, անտիօքեան դպրոցի ազատ մտածողներու այս համբակը, հաղիւ կայսերանիստ մայրաքաղաքին աթոռն բարձրացած, դժբախտ անխոհեմութիւնն էր ունեցած դպչելու հաւատացեալներու մէկ փափուկ ջիւղին, որ ընդհանուր ցնցում էր յառաջ բերած:

Ինչպէս շատ եկեղեցիներու, նոյնպէս Բիւզանդիոնի մէջ առանձին յարգանք կը վայելէր ամենասուրբ Կոյսն Մարիամ: Այն տեղ առաւելագէս սիրելի էր եղած հռչակել Կոյսն Աստուածածին: Կուսին այս տիտղոսը սերունդէ սերունդ նուիրագործուած էր Եկեղեցւոյ Հայրերէն եւ ունէր իւր հիմը ստոյգ վարդապետութեան մը վրայ: Եթէ Աստուծոյ Բանը մարմնացած է ի Քրիստոս եւ եթէ Քրիստոս Մարիամի կը պարտի այն ամէնը, ինչ որդի մը իւր մօրը կը պարտի, ապա Մարիամ ամենայն իրաւամբ մայրն է նաեւ Աստուածային Անձին, մէկ խօսքով Աստուածածին է: Կուսին այս յորջորջումը, որ Կ. Պոլսոյ հաւատացեալներուն ընտելական էր արդէն, դոնէ մի եւ նոյն աստիճանով ընտանի չէր Անտիօքի քրիստոնեաներուն: Այս աւելի տրամաբանող քաղաքը հաւատքի կարեւոր կէտի մը՝ մարդեղութեան խորհրդոյն բացատրութեան մէջ կ'ընթանար իւր ինքնուրոյն ճանապարհը. կը սիրէր խոտիւ դանաղանել ի Քրիստոս մարդկային բնութեան եւ աստուածային Անձին ստորոգելիները: Նեստոր սնած այսպիսի մթնոլորտի մէջ՝ այժմ ի Կ. Պոլիս նորալուր կը գտնէր «Աստուածածին» յորջորջանքն եւ անհամապատասխան իր տեսութիւններուն, զոր ունէր մարմնացեալ Բանին վարդապետութեան մասին: Անխորհուրդ յարձակումով փորձեց խախտել այս հա-

ւատքը: Բայց տեսաւ իր դէմ ոսոխ կանգնած ոչ միայն Մայրաքաղաքին ժողովուրդն, այլ եւ ամբողջ Եգիպտոսն եւ Արեւմուտքը: Յեցած արքունիքի վրայ՝ յամառեցաւ Նեստոր. չուղեց նահանջել:

Ինչպէս երբեմն Արիոս յանձին Աթանասի, նոյնպէս այժմ Նեստոր յանձին Կիւրղի դտաւ իւր ախոյեանը:

Եփեսոս ընտրուած էր ռազմադաշտը. այն տեղ պիտի տրուէր որոշիչ ճակատամարտը: Դէպի հոն կը յառաջանար Նեստոր իւր համախոհներով՝ թիկունքը յեց արքունիքին: Դէպի հոն կը նաւէր Եգիպտացի ձեռքին լիազօրադիրը Յաւիտենական քաղաքի հովուապետին, որ կարգած էր զինքը հրամանատար ողջամիտ կողման: Անտիօք նախանձարեկ Աղեքսանդրացւոյն արտօնութիւններէն, կը խորհէր դաւաճանել. իր աշակերտին յախուռն ընթացքին թէպէտ անհաւան, բայց չէր ուղեր նաեւ հանդուրժել Կիւրղի ոսնձգութիւններուն Բիւզանդական հողին վրայ, զոր իւր ազդեցութեան տակ կ'ուղէր զխոնալ:

Հակառակ ամէն դժուարութիւններու 431, Յունիս 22ին բացուած հրատարակեց Կիւրղի Երրորդ տիեզերական ժողովը: Առաջին նիստին մէջ իսկ դահլնկէց յայտարարուեցաւ Նեստոր իւր «ամբարիշտ» վարդապետութեանը համար:

Ոչ առանց տաղնապալից ժամերու ընթացաւ ճակատամարտը: Կիւրղի էր ստանձնած կուսին ծանրութիւնն եւ տապը. որ աներկիւղ մնաց հաստատուն ասպարէզին վրայ՝ ամէն դժուարութեանց դիմադրու: Առաջին օրէն իսկ զետակն եղած հակառակորդին վարդապետութեան կարկնուուն կէտին, տեղաց նեստորն իւր կապարձէն անխնայ: Ինչպէս Աղեքսանդրացին Աթանաս $\delta\rho\sigma\theta\sigma\iota\sigma$ = համադոյակից բառին պաշտպան կանգնած անհուն՝ փրկեց Բանին աստուածութեան վարդապետութիւնը ողջանդամ, այսպէս նաեւ Կիւրղի Աղեքսանդրացի $\theta\epsilon\sigma\theta\chi\omicron\varsigma$ = աստուածածին յորջորջանքին ջատագով՝ եղաւ Բանին մարդեղութեան վարդապետութեան աստարարը:

Կայթեց Եփեսոս ի լուր յաղթութեան համբաւին. զիշերային աղջամուղջը փարատեցաւ ջահարոյց լուսաւորութեամբ. յաղթական քայլերով առաջնորդուեցան հերոսներն իրենց հանգստարանները. խանդավառ ծա-

փահարութեամբ ողջունուեցաւ անոնց վերադարձը հայրենիք:

Չուր անցան հակառակորդ կողման ճիւղերը, ի դերեւ հանելու Սիւնհոդոսին վճիռը: Կաթողիկէ վարդապետութիւնը նուաճեց մտքերը. յաղթութեան դրօշը կը ծածանի ահա 15 դարէ ի վեր՝ կրելով իւր վրայ «Աստուածածին» նշանաբանը ոսկեգիր:

Եթէ ընդհանրական Եկեղեցւոյ համար նշանակալից էր վայրկեանը, եւ ժողովոյն վճիռն եղաւ Կանոն հաւատոյ՝ յայտնեալ ճշմարտութեան ճշգրիտ բացատրութեան համար, նոյնը առաւելագոյն չափով իբր փարոս լուսավառ փայլեցաւ հայ Եկեղեցւոյ համար, մշուշապատ ծովու անդունդէն անվթար առաջնորդելու հայ նաւը դէպի խաղաղ նաւահիստ:

Հայոց Եկեղեցին իւր զարգացման նոր դարաշրջանը կ'ապրէր: Սահակ եւ Մաշտոց նոր էին հիմ դրած հայ գրականութեան. եւ աշակերտները կը դեգերէին դեռ եւս օտար երկրի տակ՝ համբարելու սերմեր հայրենի անդաստանին համար: Պատու էր հոն երկիրը, մոայլ ամպեր մթաղնած էին մտքերը: Մասնաւորապէս Եգեսիա եւ Կ. Պոլիս, ուր դիմած էին մերիկներն՝ աւարելու օտար ժողովուրդներու մտաւոր դանձերը հայրենիքի համար, պաշարուած էին ամպրոպներէ. եւ հողմայոյցները, որոնք 429—436 տարիներու աղիտարեր մրրիկներն յառաջացուցին, այս մթնոլորտին մէջ էին կազմուած:

Առանց Եփեսոսական Սիւնհոդոսի ճառագայթած լուսին պիտի չկարենային սերմնազաւարներն որոշել ցորենահատն որոմէն եւ հայրենիքի արօրագիր ահօսարեկ դաշտերն պիտի ընդունէին սերմերն որոմնախառն. առանց փարոսի լուսարձակ առաջնորդութեան պիտի չկարենային ակաղճուն նաւերն անվթար թափել բեռները նաւահանգիստ:

Նեստորի ամբարիշտ վարդապետութիւնը չգտաւ ոտնկոխ Հայաստանի մէջ:

Առանձին ուսումնասիրութեան նիւթ պիտի դառնայ պատմական անցեալի այս էջը, որ բարեբախտաբար ոսկի տառերով է գրուած:

Ն. ԱՂԱՆԵՆ

